ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «21» հոկտեմբեր 2024թ № 1593-Լ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի N 2405-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման հավելվածի 41.1-ին կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

**հրամայում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 29-ի ««ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության փորձարկման լաբորատորիային Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգերով սահմանված

արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման մարմին նշանակելու մասին» N 2405-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի 1-ին կետում «N 059/Т-093) N 1, N 2» բառերը փոխարինել «N 059/Т-129) N 1, N 2 և N 3» բառերով.

2) Հրամանի 2-րդ կետում «հունվարի 18-ից մինչև հավատարմագրման տեխնիկական կոմիտեի կողմից հետագա հավատարմագրման կամ հավատարմագրման մերժման մասին համապատասխան որոշման ընդունումը» բառերը փոխարինել «ապրիլի 29-ից մինչև 2028 թվականի ապրիլի 29-ը» բառերով.

3) Հրամանի 2-րդ կետում «2023» թիվը փոխարինել «2024» թվով.

4) Հրամանի 5-րդ կետում «Ն. Տերյանին» բառերը փոխարինել «Ն. Հովակիմյանին» բառերով.

5) Հրամանի հավելվածով հաստատված «Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերի ցանկ»-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 16-ի N 769 որոշումը «Փաթեթվածքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին (ՄՄ ՏԿ 005/2011),

2. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի N 797 որոշումը «Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին (ՄՄ ՏԿ 007/2011),

3. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի N 798 որոշումը «Խաղալիքների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի ընդունման մասին (ՄՄ ՏԿ 008/2011),

4. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 23-ի N 799 որոշումը «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին (ՄՄ ՏԿ 009/2011),

5. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 874 որոշումը «Հացահատիկի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի ընդունման մասին (ՄՄ ՏԿ 015/2011),

6. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 876 որոշումը «Թեթև արդյունաբերության արտադրանքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին (ՄՄ ՏԿ 017/2011),

7. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 880 որոշումը «Սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին (ՄՄ ՏԿ 021/2011),

8. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 882 որոշումը «Մրգերից և բանջարեղենից ստացված հյութամթերքի տեխնիկական կանոնակարգ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի ընդունման մասին (ՄՄ ՏԿ 023/2011),

9. Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 9-ի N 883 որոշումը «Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի ընդունման մասին (ՄՄ ՏԿ 024/2011),

10. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հունիսի 15-ի N 34 որոշումը «Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ և դիետիկ կանխարգելիչ սննդի համար նախատեսված սննդամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի ընդունման վերաբերյալ (ՄՄ ՏԿ 027/2012),

11. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի հուլիսի 20-ի N 58 որոշումը «Սննդային հավելումների, բուրավետիչների և տեխնոլոգիական օժանդակ միջոցների անվտանգությանը ներկայացվող պահանջներ» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգն ընդունելու մասին (ՄՄ ՏԿ 029/2012),

12. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի N 67 որոշումը «Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի մասին (ՄՄ ՏԿ 033/2013),

13. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 9-ի N 68 որոշումը «Մսի և մսամթերքի անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի մասին (ՄՄ ՏԿ 034/2013),

14. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 162 որոշումը «Ձկան և ձկնամթերքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի վերաբերյալ (ԵԱՏՄ ՏԿ 040/2016),

15. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի հունիսի 23-ի N 45 որոշումը «Փաթեթավորված խմելու ջրի, այդ թվում՝ բնական հանքային ջրի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի մասին (ԵԱՏՄ ՏԿ 044/2017),

16. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի հոկտեմբերի 29-ի N 110 որոշումը «Թռչնի մսի և դրա վերամշակումից ստացվող արտադրանքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի մասին (ԵԱՏՄ ՏԿ 051/2021),

17. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2018 թվականի դեկտեմբերի 5-ի N 98 որոշումը «Ալկոհոլային արտադրանքի անվտանգության մասին» Եվրասիական տնտեսական միության տեխնիկական կանոնակարգի վերաբերյալ (ԵԱՏՄ ՏԿ 047/2018):».

6) Հրամանի հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգ ցանկ»-ի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 16-ի «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքների անվտանգության մասին տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 957-Ն որոշում:»:

2. «ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության և «ՆԱԻՐԻ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերության միջև կնքված № ԸՊ002559 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության

վկայագրի գործողության ժամկետի ավարտից 1 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

3. Հիմք ընդունելով սույն հրամանի 1-ին կետը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-01 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական՝ Ն-01 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-01 (Հ-01) 2024:

4. Սույն հրամանի 1-ին կետով նախատեսված փոփոխությունները գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Հովակիմյանին:

2024-07-02 18:06:05 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ